ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ԽՈՐ ՎԻՐԱՊԻ ՎԱՆՔԸ ԵՎ ՆՐԱ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ

Խոր Վիրապի վանքը, որը քրիստոնեական Հայաստանի հնագույն և գլխավոր սրբավայրերից է, միջնադարում նաև ուսումնական ու մշակութային կարևոր կենտրոն է եղել: Ս. Գրիգոր Լուսավորչի անվամբ սրբագործված մեծահռչակ վանքը հանդիսացել է նաև գրչության կենտրոն, ուր գրվել ու նկարազարդվել են բազմաթիվ ձեռագիր մատյաններ:

Այժմ Խոր Վիրապի վանական համալիրում կանգուն են երկու եկեղեցիներ: Նրանցից հնագույնը կառուցվել է հենց նշանավոր Վիրապի վրա Ներսես Գ Տայեցի (Շինող) Կաթողիկոսի կողմից շուրջ 642 թվականին, ինչպես այդ մասին վկայում է Հովհաննես Դրասխանակերտցին. «...շինէ տաճար սրբութեան և ի վերայ վիրապի Սրբոյն Գրիգորի...» *(Յովհաննու Կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 83)*: Ներսեսաշեն եկեղեցին հետագայում ավերվել է և տեղում նոր եկեղեցի կառուցվել 1662-ին Ագուլիսցի խոջա Շամոնի և Թիֆլիսեցի խոջա Ավթանդիլի ծախսով: Վանքի պարսպին կից կառուցված **Ս. Գրիգոր** կոչվող այս փոքր եկեղեցու Ավագ խորանի աջ մասից բացվում է մուտքը դեպի խորափոր Վիրապ: Այն ունի 4,5 մ տրամագիծ, շուրջ 6 մ բարձրություն, գմբեթանման ծածկ:

Ս. Գրիգորից բացի, վանական համալիրի կենտրոնում վեր է խոյանում ԺԷ դարում կառուցված **Ս. Աստվածածին** եկեղեցին, որն ունի վիմագիր արձանագրություններ ու բարձրաքանդակներ: Դրանցից մեկում պատկերված են Ս. Գրիգոր Լուսավորիչը, Տրդատ թագավորը և Աշխեն թագուհին:

Եկեղեցիներից ոչ հեռու **Օթեաց Խաչ** ուխտատեղին է, ուր, ըստ ավանդության, հանդիպել են Հայոց Եկեղեցու հիմնադիրներ Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալները: 1859-ին այստեղ մատուռ է կառուցել Ալեքսանդրապոլցի (Գյումրեցի) Վարդան Քետերյանցը:

Խոր Վիրապի վանքը նշանավոր է նախ և առաջ որպես սրբավայր և ուխտատեղի: Ողջ միջնադարի ընթացքում, անգամ օտար տիրապետության ժամանակաշրջանում, երբ ճանապարհներն անվտանգ չէին, Խոր Վիրապը չի դադարել դեպի իրեն ձգել երկրի տարբեր կողմերից եկող ուխտավորներին: Այս մասին վկայող մի փաստ ենք գտնում Վարդան Արևելցու «Տիեզերական պատմության» մեջ, ուր խոսվում է 1126 թ. Անիի Մայր տաճարի ավագերեց Գրիգորի՝ Խոր Վիրապ գնալու և ետ դարձի ժամանակ «թուրքաց» զորքից նրան պատահած փորձության մասին *(Մեծին Վարդանայ Բարձրբերդեցւոյ Պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1861, էջ 158)*: Իսկ ԺԸ դարում Խոր Վիրապ ուխտի էին գալիս ու վանքին նվիրատվություն կատարում ոչ միայն հայերը, այլև շրջակա բնակավայրերի թուրքերն ու քրդերը *(Ս. Էփրիկյան, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. Բ, Վենետիկ, 1907, էջ 209)*:

Խոր Վիրապի վանքի պատմության մշակութային առումով ամենավառ շրջանը կապված է մեծանուն Վարդան Արևելցու անվան ու գործունեության հետ:

Հենց նրա ժամանակ վանքում հաստատվեց բարձր տիպի դպրոց՝ վարդապետարան, ուր ուսանելու էին գալիս Հայաստանի տարբեր շրջաններից և անգամ Կիլիկիայից: Վարդան Արևելցու կյանքին, գործին և մատենագրական վաստակին նվիրված երկհատոր ուսումնասիրության մեջ Փայլակ Անթապյանը հանգամանորեն անդրադառնում է նաև բազմարդյուն վարդապետի՝ Խոր Վիրապում անցկացրած տարիներին: Ենթադրելով, որ Արևելցին Կայենաբերդից Խոր Վիրապ է տեղափոխվել 1257-1258 թթ., Փ. Անթապյանն այնուհետև գրում է. «Նա այստեղ անմիջապես անցնում է իր սիրելի աշխատանքին՝ մանկավարժական և մատենագրական եռանդուն գործունեության: ... Թե ինչ վիճակ էր տիրում այնտեղ նախքան Վարդան Արևելցու գալը, հստակ հայտնի չէ: Մինչդեռ նրա օրոք Խոր Վիրապի դպրոցը իրավամբ դառնում է միջնադարյան մեծ համբավի արժանացած բարձրագույն այն ուսումնական հաստատություններից մեկը, որտեղ դասավանդում էին ժամանակակից գիտական բոլոր ճյուղերը և՛ կրոնական-աստվածաբանական, և՛ փիլիսոփայական – գիտական՝ «յարտաքին գրոց» վերաբերյալ առարկաներ: 1267 թ. գարնան ամիսների դեպքերով եզրափակվող իր «Հաւաքումն պատմութեան» երկը Վարդան Արևելցին ավարտում է Խոր Վիրապում: Այստեղ է շարադրել իր Դանիելի «Մեկնութիւն»-ը: Կասկածից դուրս է, որ այստեղ է գրի առել նաև իր «Աշխարհացոյց»-ը (1268-1270 թթ.) և մյուս աշխատություններից մի քանիսը, որովհետև մինչև կյանքի վերջը նրա գործունեության մշտական վայրը (փոքր ընդհատումներով) եղել է Խոր Վիրապը» *(Փ. Անթապյան, Վարդան Արևելցի, հ. Ա, Երևան, 1987, էջ 40-41):* Իսկ Վարդան Արևելցին մահացել է 1271 թ. և թաղվել հենց Խոր Վիրապում *(Փ. Անթապյան, Վարդան Արևելցի, հ. Ա, էջ 43-47):*

Վարդան Արևելցու՝ Խոր Վիրապի դպրոցի աշակերտների թվի վերաբերյալ տեղեկություն է հաղորդում նրանցից մեկի՝ Գրիգոր Բալուեցու վկայաբանությունը շարադրած Դավիթ երեցը՝ նշելով, որ Գրիգորը վեց տարի, 1260-66 թթ., ուսանել է Խոր Վիրապում, «...գնացեալ դադարէր յարեւելս՝ յԱրարատեան գաւառն՝ ի վանքն Վիրապի Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, առ հոչակաւոր իմաստասէր վարդապետն Հայոց Վարդան, որ և դպրոց կարգեալ էր նորա Խ(40) աշակերտօք» *(Հ. Մանանդյան, Հ. Աճառյան, Հայոց նոր վկաներ, Վաղարշապատ, 1903, էջ 105):* Այդ աշակերտների թվում էին Գլաձորի համալսարանի ապագա հիմնադիր ուսուցչապետ Ներսես Մշեցին, հետագայում մեծ հոչակ վայելած Հովհաննես վարդապետ Երզնկացին (Պլուզ), Գևորգ Սկևռացին (Լամբրոնացի), Գրիգոր Բջնեցին, Սարգիսը, Տիրացուն, հավանաբար նաև Մխիթար Այրիվանեցին *(Փ. Անթապյան, Վարդան Արևելցի, հ. Բ, Երևան, 1989, էջ 26, Է. Հարությունյան, Մխիթար Այրիվանեցի, Երևան, 1985, էջ 32):*

Վարդան Արևելցու ուսուցչապետության շրջանում Խոր Վիրապում գրված մեզ հայտնի ձեռագրերը հետևյալներն են.

Ա. «Մեկնութիւն Սաղմոսաց Վարդանայ Արեւելցւոյ», 1266 թ., գրիչ՝ Տիրացու (Նոր Ջուղա, թիվ 358): Հիշատակարանում գրիչը նախ հանգամանորեն խոսում է Դավթի սաղմոսների ու նրանց նշանակության մասին, ապա նշում, որ երբեմն դրանք սխալ են մեկնաբանվել, ուստի «մեծ վարդապետ» Վարդանը համառոտել, կարգավորել է նախորդ շրջանի մեկնությունները՝ դրանք դարձնելով «դիւրահաս ընթերցողաց և ուսումնասիրաց»: Ապա նշում է, որ ինքը աշակերտն է Վարդանի, և գրչության մասին հայտնում է. «Կատարեցաւ սա **ի Վիրապն**, մինչ կաք մեք ի յուսման, ի թվին ՉԺԵ(1266)», չի մոռանում նաև գրչության դժվարությունների մասին գրել՝ «ով եղբայր, մի մեղադրէ, ճշմարտիւ ասեմ, զի եղանակս ձմեռն էր, դեղս սառցոյց, եւ տունս ցուրտ, եւ ես պանդուխտ, զի անպարապ բազում մասն

ճրագով գրեցաւ...» *(ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմող՝ Ա. Մաթևոսյան, Երևան, 1984, էջ 346-347)*:

Բ. Տոնապատճառ, Հավաքածո, 1267 թ., գրիչ՝ Գևորգ Սկևռացի (Մատենադարան, թիվ 3082): Մատյանի գրչությունն սկսվել է Խոր Վիրապում, շարունակվել Սաղմոսավանքում և Թեղենյաց վանքում: Սկևռացին թողել է ընդարձակ ու տեղեկաշատ մի հիշատակարան: Այն վկայում է, օրինակ, որ հիշյալ շրջանում Խոր Վիրապի վանքը գտնվում էր Բջնիի եպիսկոպոսական Աթոռի իշխանության տակ: Սկևռացին հակիրճ տողերի մեջ յուրովի մեկնաբանում է Խոր Վիրապի՝ որպես Գրիգոր Լուսավորչի չարչարանաց և Հայոց դարձի նախասկիզբ վայրի խորհուրդը, միաժամանակ արժեքավոր բնութագրությունը տալիս Վարդան Արևելցու գլխավորած դպրոցի: Հիշատակարանում կարդում ենք. «...սկիզբն գրութեան սորա եղև **ի տիեզերահռչակ սուրբ ուխտն Վիրապին**... ուր Սուրբ Լուսաւորիչն մեր չորեքտասնամեայ երկարութիւն ժամանակին ի խորագոյն խաւարչուտն արգելեալ բանտի՝ ի մէջ չարաշունչ մահաբուրիչ դժընդակաթոյնն սողնոց, ուրանաւր իբրու յարգանդի մայր զմերն լիներ յղացեալ փրկութիւն, ուստի ելեալ ծագէր զլոյսն աստուածգիտութեան արեգակնաքատակ ծաւալմամբ յաշխարհս Հայոց, ծնանելով վերստին ի Քրիստոս ըստ մարգարէութեանն զազգ մի ողջոյն, ուրանաւր և մեզ եղև ժամանակ ինչ դեգերել ի դուռն աստուածազարդ այնր տաճարի, սակս կրթութեան մերոյ, ի մեծ վարդապետէն աստուածազգեաց առնէն Վարդանայ, որ ընդ այն ժամանակս ի վերայ ամենայն մասանցն բարեաց՝ որով բոլորն կատարի առաքինութիւն, և զուսուցչապետութեանն ևս զգործ ի կիր արկեալ, ընդ առնելն լծակցելով, որ **ի դուռն Սրբոյն Գրիգորի** նստելով՝ զամենայն եկեալսն յաստուածայինն ուղղէր ճանապարհ» *(ԺԳ դարի հիշատակարաններ, էջ 351)*:

Գ. «Մեկնութիւն Դանիէլի Վարդանայ Արեւելցւոյ» (Մատենադարան, թիվ 4834): Հեղինակն այն գրել է Գրիգոր վարդապետ Սանահնեցու պատվերով և, ինչպես հիշատակարանում է նշում, գրչությունը սկսել 1267-ին Խոր Վիրապում, ավարտել՝ 1268-ին Աղջոց վանքում. «Եւ սկսաք ՉԺԶ (1267) թուին ի Սուրբ Վիրապին, և կատարեցաւ ՉԺԷ (1268)... ի սուրբ ուխտս Աղչոց վանիցս» *(ԺԳ դարի հիշատակարաններ, էջ 365)*:

Դ. Գրիգոր Բջնեցու համար Գրիգոր Նյուսացու գործերից մեկն ընդօրինակած Ստեփանոսի մատյանում (Մատենադարան, թիվ 469) 1271թ. «**առ դրան Սրբոյ Վիրապիս**» հիշատակարան է գրել ծերունազարդ Վարդան Արևելցին, որն այդ թվականին էլ մահացել է *(ԺԳ դարի հիշատակարաններ, էջ 402)*:

Վարդան Արևելցու մահից հետո Խոր Վիրապի դպրոցի գործունեության մասին վկայությունների չենք հանդիպում: Հայ միջնադարյան մի շարք այլ հայտնի դպրոցների պես այդ դպրոցը ևս գործում էր ոչ այնքան գտնվելու վայրի, որքան ուսուցչապետի հեղինակության շնորհիվ, իսկ տեղից տեղ գնալիս՝ ռաբունապետն ու սաներն անբաժան էին: Ուստի կարելի է ենթադրել, որ Վարդան Արևելցու մահից հետո Խոր Վիրապի դպրոցը դադարեց գործել:

Սակայն վանքն իր ուրույն, ներքին հոգևոր մշակութային կյանքով էր ապրում, որը թեև մեծ կախում ուներ տարածաշրջանի քաղաքական, տնտեսական, մշակութային կյանքի ելևէջներից, բայց միաժամանակ, իր վանական ներփակ բնույթին համապատասխան, օժտված էր ինքնուրույն գործելու հնարավորությամբ:

Խոր Վիրապի վանքը միշտ էլ պահպանել է իր մեծ համարումը: Սուրխաթում (Ղրիմ) աշխատող Տերտեր Երևանցի գրիչն, օրինակ, 1336 թ. հիշատակարանում իր ծննդավայրի մասին նշելիս գրում է.

«Ի քաղաքէն այն պատուական,
Որ իւր անունն է Երեւան,
Խոր Վիրապի նա հարեւան» *(ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմող՝ Լ. Խաչիկյան, Երևան, 1950, էջ 278):* Փաստորեն Երևանի տեղորոշման համար ուղենիշ է ծառայել հոչակավոր Խոր Վիրապը:

1441 թ. Հայոց Կաթողիկոսական Աթոռի՝ Սսից Էջմիածին տեղափոխվելուց հետո, այստեղ առաջին գահակալ դարձավ Խոր Վիրապի վանքում տևական ժամանակ ճգնած Կիրակոս վարդապետ Վիրապեցին: Թեև սկզբնաղբյուրները ընդգծում են հատկապես Կիրակոսի ճգնակեցության մասին, սակայն վերջինս նաև մշակութային հակումներ է ունեցել: Հայտնի է, որ մինչև կաթողիկոս դառնալը նա եղել է Կաֆայում (Ղրիմ) և այնտեղից վերադառնալիս իր հետ բերել է քերականական և այլ բնույթի նյութեր պարունակող մի շատ արժեքավոր ժողովածու, որը հետագայում խմբագրել ու Հովհաննես Արճիշեցուն ընդօրինակելու է տվել Թովմա Մեծոփեցին: Մատյանի (Մատենադարան, թիվ 7117) հիշատակարանում ասվում է. «որք հանդիպիք... գրոյս յիշեսջիք ի բարին Քրիստոս զճգնաւորն զԿիրակոսն՝ **կենդանաթաղ գերեզմանին Գրիգորի Լուսաւորչին՝ Վիրապայ**, որ եբեր զգիրս զայս ի Հայս, ի Կաֆա քաղաքէն...» *(ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմ.՝ Լ. Խաչիկյան, հ. Ա, Երևան, 1955, էջ 597):*

Ինչպես երևում է Թովմա Մեծոփեցու վկայությունից, Կիրակոսը Խոր վիրապ է եկել 1409 թ. «տէր Կիրակոս... սուրբ և առաքելական կանոնացն քարոզող և հետևող, երեսուներկու ամաւ յառաջ (1441-32=1409) ելեալ գաւառէն իւրմէ, եկեալ բնակեցաւ ի սուրբ ուխտն և կենդանաթաղ գերեզման Լուսաւորչին ի Վիրապն, և անտի առանձնացեալ ի յանապատն Վանստայ և այժմ ընտրութեամբ և Հոգւոյն Աստուծոյ կոչմամբ եդաք ի յաստիճան Հայրապետութեան» *(Թովմա Մեծոփեցու Յիշատակարանը, Թիֆլիզ, 1892, էջ 54):* Մինչև Ակոռիի մոտ գտնվող Վանստան տեղափոխվելը, Կիրակոսը բավական երկար ժամանակ Խոր Վիրապում է մնացել, այդ պատճառով էլ Վիրապեցի մականունն է ստացել:

1441 թ. կաթողիկոսական ընտրության մասնակիցներից էր Խոր Վիրապի վանահայր Անտոնը *(Թովմա Մեծոփեցու Յիշատակարանը, էջ 52):*

Վանքի գրչատունը շարունակում էր գործել նաև հաջորդ դարերում: 1577 թ. Խոր Վիրապում Ավետարան է ընդօրինակել Մաղաքիա քահանան (Նոր Ջուղա, թիվ 89):

Վանքի պատմության վերաբերյալ բավական տեղեկություններ են պահպանվել ԺԷ դարից: Դարասկզբին հայ եկեղեցական կյանքում առաջացած բավականին բարդ հարաբերությունների մթնոլորտում նշանակալից դեր էր կատարում Խոր Վիրապի առաջնորդ Մանվել եպիսկոպոսը *(Առաքել Դավրիժեցի, Պատմություն, Երևան, 1988, էջ 22-26, 188):*

Խոր Վիրապը հավանորեն հայտնի է եղել նաև իր ձեռագրական հավաքածոյով: Հետաքրքրական մի վկայություն է պահպանվել 1621 թ. Մեսրոպ Կաֆայեցու հիշատակարանում: Նա գրում է, որ Երեմիայի մեկնությունը գտնելու համար ինքը Կաֆայից եկել է Հայաստան, այցելել Էջմիածին, Սաղմոսավանք, Սանահին, Հաղբատ և Խոր Վիրապ (ի վերջո փնտրածը գտել է Կեսարիայում) *(ԺԷ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց՝ Վ. Հակոբյան, հ. Բ, Երևան, 1978, էջ 30):*

1621 թ. Տաթևի Մեծ անապատում ընդօրինակված մի Սաղմոսարան է ստացել Խոր վիրապի առաջնորդ Դավիթ եպիսկոպոսը *(ԺԷ դարի հիշատակարաններ, հ. Բ, էջ 32):* Դավթին հաջորդել է Մկրտիչ վարդապետ Տաթևացին: 1646 թ. մի հիշատակարանում, ուր նշվում է երկրամասում հայ բնակչության համար ստեղծված շատ ծանր կացության մասին, առանձնակի ընդգծվում է Մկրտիչ վարդապետի տոկունությունը *(ԺԷ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց՝ Վ. Հակոբյան,հ. Գ, Երևան 1984, էջ 255):* Մոտավորապես 1660 թ. Խոր

Վիրապի վանահայրությունը ստանձնել է Դավիթ Տփղիսեցի վարդապետը (Դավիթ Բ): Հենց նրա անվան հետ է կապվում վանքի հիմնավոր վերաշինությունը: Նրա օրոք կառուցվում են Ս. Գրիգոր եկեղեցու նոր շենքը, Ս. Աստվածածինը: Իսկ երբ 1679 թվականի ուժգին երկրաշարժից մեծ ավերածություններ են լինում, նվիրյալ վանահոր ջանքերով բոլոր շինությունները վերականգնվում են: Դավիթ Բ վանահայրը մահացել է 1695-ին: Ս. Աստվածածին եկեղեցու պատին մի չափածո արձանագրություն է գրված, ուր ըստ արժանվույն գնահատված է Դավիթ վանահոր վաստակը:

Այս շրջանում շարունակում էր գործել նաև Խոր Վիրապի գրչության կենտրոնը: Հայտնի են Մուրատ դպիրի ընդօրինակած, այժմ Մատենադարանում պահվող 1662 և 1663 թթ. Ավետարանները (թիվ 5413, 6752): 1671 թ. Ոսկան աբեղան Խոր Վիրապում ընդօրինակել է Ագաթանգեղոսի Պատմությունը՝ մատյանի վերջում ներառելով Դաշանց թուղթը և Մեսրոպ Վայոցձորեցու «Պատմութիւն Մեծին Ներսիսի» գործը (Մատենադարան, թիվ 3825): Նույն շրջանում գրչությամբ է զբաղվել նաև վանքի միաբան Հովհաննես Կարնեցին: 1683 թ. Երևանցի ժամհար Առաքելը Մատթեոս աբեղայի ձեռքով մի Ավետարան է նվիրում Խոր Վիրապին (Նոր Ջուղա, թիվ 89):

Դավիթ Բ-ից հետո, 1695-ից, վանքի վանահայրն է Ղազար վարդապետը, որը հիշվում է մինչև Ղազար Ա Ջահկեցի Կաթողիկոսի (1737-1751) աթոռակալության տարիները: Դրանից հետո վանքը մի կարճ ժամանակ ամայանում է, լքվում միաբաններից, սակայն շուտով՝ 1765 թ. վերականգնվում է Սիմեոն Երևանցի Կաթողիկոսի հոգածությամբ: Կաթողիկոսը նաև վանքի համար տասը գյուղերից բաղկացած թեմ է հաստատում: Այդ գյուղերից էին Արտաշատը, Վեդին, Ակոռին և այլն *(Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 439-440)*:

Խոր Վիրապում գրված երկու ձեռագիր է հայտնի ԺԸ դարից: 1774 թ. վանքում իր համար մի Ժողովածու է ընդօրինակել Գրիգոր Սյունեցին (Քաչանեցի) (Մատենադարան, թիվ 7044), իսկ մեկ տարի անց՝ մեկ այլ ծավալուն (556 թերթանի) մատյան, ուր ընդգրկված են Գրիգոր Տաթևացու Սաղմոսաց մեկնությունը, քարոզներ, Հակոբ Ղրիմեցու «Յաղագս պսակի ամուսնացելոց» գործը (Մատենադարան, թիվ 811):

Հետագա շրջանում ևս վանքը պահպանել է իր դերը և, որպես կարևորագույն համազգային սրբավայր, նպաստել նաև մշակութային կյանքի զարգացմանը: Անգամ մեր օրերում հենց այս վանքում էր, որ, առաջիններից մեկը լինելով, 1989 թ. ստեղծվեց «Հայ եկեղեցասեր երիտասարդաց միություն»-ը, բացվեց կիրակնօրյա դպրոց, հրատարակվեց կրոնա-մշակութային «Գավիթ» թերթը՝ նախաձեռնությամբ ներկայիս վանահայր Տ. Մխիթար քահանա Սարիբեկյանի:

Մոտենում է Հայոց 1700-ամյա Դարձի տոնակատարությունը : Այս փառավոր տոնին պատշաճ կերպով է նախապատրաստվում նաև Խոր Վիրապի վանքը, որի վերաշինման, բարեկարգման ու բարգավաճման գործին բացառիկ հոգածությամբ հետևում է անձամբ Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Առաջինը: